ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» մարտի 2021 թվականի N 50

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0046-0018 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ, Գ.ՆԺԴԵՌՀԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 29/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0.02565 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎՈՎԱ ՂՈՒԿԱՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ, ԼԻԱՆԱ ՍԱՐԳՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ԷԼԵՈՆՈՐԱ ՎՈՎԱՅԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԵՎ ՆԱԻՐԱ ՎՈՎԱՅԻ ԾԱՏԻՆՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վովա Ղուկասի Հովհաննիսյանի կողմից ներկայացված 26.02.2021թ. թիվ Հ-96 դիմումը, 31.01.2005թ. թիվ 2137461 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը և այն հանգամանքը, որ բնակարանի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.02565 հա հողամասը համապատասխանում է ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և սեփականաշնորհված բնակարանը իրենից ներկայացնում է քաղաքացիներին օրենքով սահմանված կարգով սեփականաշնորհված սակավաբնակարան բնակելի տուն, ղեկավարվելով ՀՀ Հողայի օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետով, 59-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման 3-րդ կետի է ենթակետով, ՀՀ կառավարության 08.05.2003թ. թիվ 714-ն որոշման է կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով և 43-րդ հոդվածով՝

որոշում եմ.

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-007-0046-0018 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, բնակարանի սպասարկման համար նախատեսված, բնակավայրերի նպատակային նշանակության 0.02565 հա մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ ճանաչել Վովա Ղուկասի Հովհաննիսյանի, Լիանա Սարգսի Խաչատրյանի, Էլեոնորա Վովայի Պողոսյանի, և Նաիրա Վովայի Ծատինյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
2. Հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Հողամասի սահմանները որոշվում են «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի համաձայն:
4. Հողամասում առկա են ինքնակամ կառուցված 29.63 քմ ներքին մակերեսով տնտեսական շինություն և 3.59 քմ մակերեսով պարիսպներ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» մարտի 2021 թվականի N **51**

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 2019թ. հունիսի 26-ի թիվ 49-Ա որոշումը, Ստեփանավան համայնքի, Մ. Պապյան թիվ 1/4 տան բնակիչ Անահիտ Աբովյանի 26.02.2021թ. թիվ Ա-95 դիմումը, Ֆ. Նանսենի փողոց թիվ 4/3 տան բնակիչ Լուսինե Բաբլումյանի 03.03.2021թ. թիվ Բ-109 դիմումը, Ռումինական փողոց թիվ 6/4 բնակարանի բնակիչ Էդգար Պողոսյանի 03.03.2021թ. թիվ Պ-110 դիմումը և Անդրանիկի փողոց թիվ 32 տան բնակիչ Էմիլյա Համբարյանին 04.03.2021թ. թիվ Հ-112 դիմումը Ստեփանավան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 08.02.2021թ. թիվ 11/1 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 04.03.2021թ. արձանագրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ 1-ին մասի հոդվածի 24-րդ կետով՝ *որոշում եմ.*

1. Ստեփանավան համայնքի բնակիչներ Անահիտ Աբովյանին տրամադրել 20000 (քսան հազար) ՀՀ դրամ, Լուսինե Բաբլումյանին 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ, Էդգար Պողոսյանին 10000 (տաս հազար) և Էմիլյա Համբարյանին 20000 (քսան հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» մարտի 2021 թվականի N 52

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ՀԱՍՑԵԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 27.01.2021Թ. ԹԻՎ 07 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարգիս Ղարաքեշիշյանի կողմից ներկայացված 25.01.2021թ. թիվ Ղ-36 դիմումը 02.10.2002թ. թիվ 902713 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 05.03.2021թ. N Կ-05032021-06-0059 որոշումը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան քաղաքի Հ.Ավետիսյան փողոց հասցեում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան Հ. Ավետիսյան փողոց թիվ 17/3 խանութ:
2. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ղեկավարի 27.01.2021թ. թիվ 07 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» մարտի 2021 թվականի N 53

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 2019թ. հունիսի 26-ի թիվ 49-Ա որոշումը, Ստեփանավան համայնքի Պիոներների թիվ 7 տան բնակիչ Աշոտ Բաղդասարյանի 10.03.2021թ. թիվ Բ-114 դիմումը, Ստեփանավան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 08.02.2021թ. թիվ 11/1 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 10.03.2021թ. արձանագրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ 1-ին մասի հոդվածի 24-րդ կետով՝ *որոշում եմ.*

1. Ստեփանավան համայնքի բնակիչ Աշոտ Բաղդասարյանին տրամադրել 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» մարտի 2021 թվականի N 54

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0086-0014 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՐԱՖՖԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 26 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վովա Սուքիասյանի կողմից ներկայացված 25.01.2021թ. թիվ Ս-42 դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան Ռաֆֆի փողոց թիվ 26 հասցեում գտնվող հողամասի սահմանային չափերը և մակերեսը ճշտելու, հողամասի վրա ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու խնդրանքը, 11.08.2004թ. N 1247753 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ ինքնակամ կառույցների պահպանումը՝ չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Ճշտել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ք. Ստեփանավան Ռաֆֆի փողոց թիվ 26 հասցեի, 06-007-0086-0014 կադաստրային ծածկագրի տակ գտնվող հողամասի սահմանային չափերը և մակերեսը համաձայն «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերի և 0.07264 հա մակերեսով

հողամասի նկատմամբ ճանաչել Վովա Անդրանիկի Սուքիասյանի և Սուսաննա Գևորգի Խանաղյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

2. Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ք. Ստեփանավան Բաֆֆի փողոց թիվ 26 հասցեի, Վովա Անդրանիկի Սուքիասյանին և Սուսաննա Գևորգի Խանաղյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 06-007-0086-0014 կադաստրային ծածկագրի տակ գտնվող՝ 0.07264 հա հողամասում ինքնակամ կառուցված 42.72 քմ արտաքին մակերեսով, համաձայն թիվ 1247753 սեփականության վկայականի թիվ 1 բնակելի տան կիսանկուղին կից կառուցված կիսանկուղը, համաձայն թիվ 1247753 սեփականության վկայականի թիվ 1 բնակելի տանը կից կառուցված 40.82 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 2.44քմ արտաքին մակերեսով սան հանգույցը, 23.74 քմ մակերեսով ծածկը, 29.09 քմ բաց պատշգամբը և 49.12 քմ արտաքին մակերեսով գոմը:

3. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 42.72 քմ մակերեսով կիսանկուղի համար 36740.0 /երեսունվեց հազար յոթ հարյուր քառասուն/ ՀՀ դրամ, 40.82 քմ մակերեսով բնակելի տան համար 35110 /երեսունհինգ հազար մեկ հարյուր տաս/ ՀՀ դրամ, 2.44քմ մակերեսով սան հանգույցի համար 2100 /երկու հազար մեկ հարյուր / ՀՀ դրամ, 23.74 քմ մակերեսով ծածկի համար 20420 /քսան հազար չորս հարյուր քսան/ ՀՀ դրամ, 29.09 քմ բաց պատշգամբի համար 25020 / քսանհիգ հազար քսան/ ՀՀ դրամ և 49.12 քմ մակերեսով գոմի համար 42250 /քառասուներկու հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման վճարի չափը կազմում է՝ 161640 /հարյուր վաթսունմեկ հազար վեց հարյուր քառասուն/ ՀՀ դրամ, որը վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255001712 հաշվեհամարին:

4. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» մարտի 2021 թվականի N 55

ԱՆՉԱՓԱՀԱՍ ՌԱՅԻՍԱ ԱՐՄԵՆԻ ԱՂԱԲԱԼՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Գվանդիրի Աղաբալյանի իր անչափահաս երեխային՝ Ռայիսա Արմենի Աղաբալյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքը օտարելու թույլտվություն ստանալու մասին 05.03.2021թ. թիվ Ա-113 դիմումը, Ստեփանավան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 10.03.2021թ. տրված դրական եզրակացությունը, ղեկավարվելով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել Արմեն Գվանդիրի Աղաբալյանին օտարելու իր անչափահաս երեխային՝ Ռայիսա Արմենի Աղաբալյանին (ծնված՝ 06.07.2005թ.), ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի փողոց թիվ 3 շենք, բնակարան թիվ 7 հասցեում գտնվող անշարժ գույքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» մարտի 2021 թվականի N 56

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ 06-051-0022-0010 ԾԱԾԿԱԳՐԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վաչագան Մովսեսի Կիրակոսյանի կողմից ներկայացված 12.03.2021թ. թիվ Կ-119 դիմումը, 03.07.2003թ. թիվ 1148567 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 -Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր գյուղի 06-051-0022-0010 ծակագրի անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, գ. Կաթնաղբյուր, 9-րդ փողոց, 1 փակուղի թիվ 4 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» մարտի 2021 թվականի N 57

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 46Ա ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՍՑԵԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտուր Մարտիրոսյանի կողմից ներկայացված 15.023.2021թ. թիվ Մ-120 դիմումը, 10.04.2008թ. թիվ 2500803 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Ստեփանավան քաղաքի Ավետիսյան փողոց թիվ 46ա հողատարածք հասցեի նոր փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, Ավետիսյան փողոց թիվ 46 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» մարտի 2021 թվականի N 58

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-007-0613-0028 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍԵՐԳՈՅԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՎԵՐԱՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տաշիր համայնքի ք. Տաշիր Գրիբոյեդովի փողոց թաղամաս 5 թիվ 4 հասցեի բնակիչ Արմենուհի Սերգոյի Կիրակոսյանի դիմումը, 30.04. 2010թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ սեղանամատյան 1093, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ 510-Ն օրենքով՝ *որոշում եմ.*

1. Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 06-007-0613-0028 ծածկագրի տակ գտնվող, ըստ փաստացի չափագրման 1.1116 հա մակերեսով վարելահողի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը:
   ա/ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 06-007-0613-0028 ծածկագրի տակ գտվող վարելահողի մակերեսը՝ 1.1116 հա
   բ/ Հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Արմենուհի Սերգոյի Կիրակոսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» մարտի 2021 թվականի N 59

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 06-007-0730-0017 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍԵՐԳՈՅԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՎԵՐԱՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տաշիր համայնքի ք. Տաշիր Գրիբոյեդովի փողոց թաղամաս 5 թիվ 4 հասցեի բնակիչ Արմենուհի Սերգոյի Կիրակոսյանի 12.03.2021թ. թիվ Կ-118 դիմումը, 30.04. 2010թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ սեղանամատյան 1093, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ 510-Ն օրենքով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 06-007-0730-0017 ծածկագրի տակ գտնվող, ըստ փաստացի չափագրման 0.12214 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը:

   ա/ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 06-007-0730-0017 ծածկագրի տակ գտնվող բնակելի կառուցապատման հողամասի մակերեսը՝ 0.12214 հա

   բ/ Հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Արմենուհի Սերգոյի Կիրակոսյանին:
3. Հաստատել վերը նշված անշարժ գույքի նոր փոստային հասցեն՝ ՀՀ Մարզ Լոռի համայնք Ստեփանավան Արմանիս թաղամաս 8-րդ փողոց թիվ 12 հողամաս:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» մարտի 2021 թվականի N 60

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Գ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9Ա ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վիկտորիա Մարդոյանի կողմից ներկայացված դիմումը, 30.07.2003թ. թիվ 1676415 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Ստեփանավան քաղաքի Գ Նժդեհի փողոց թիվ 9ա բնակելի տան հասցեի նոր փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, Խորհուրդների փողոց թիվ 8 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» մարտի 2021 թվականի N 61

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԴԵՍԻՆԻ 48 ՇԵՆՔԻ ԹԻՎ 5 ՏԱՆ ՀԱՍՑԵԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ջեմֆիրա Աղաջանյանի կողմից ներկայացված դիմումը, 12.02.2019թ. թիվ 12022019-06-0012 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1 -ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Ստեփանավան քաղաքի Դեսինի փողոց թիվ 48 շենք 5 բնակարան հասցեի նոր փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, Դեսինի փողոց թիվ 5 շենք 5 բանկարան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» մարտի 2021 թվականի N **62**

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԳՅՈՒՂԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑ 42 ՏԱՆ ԲՆԱԿԻՉ ԱՐՍԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նոր Խարբերդ գյուղի բնակիչ Արսեն Մանուկյանի 24.02.2021թ. N Մ-94 դիմումը, Ստեփանավան համայնքի ավագանու 09.04.2020թ. Թիվ 22-Ա որոշումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի վարչական տարածքից 78.0 հա 4-րդ կարգի արոտ 06-106-0110-0002 ծածկագրից վարձակալության իրավունքով տրամադրել Արսեն Մանուկյանին համաձայն կից տրվող հողամասի հատակագծի:
2. Արսեն Մանուկյանի հետ կնքել հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր 3 տարի ժամկետով, վարձավճարի չափ սահմանելով՝ տարեկան 215.280 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» մարտի 2021 թվականի N 63

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ 06-051-0009-0025 ԾԱԾԿԱԳՐԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ղարիբ Պետրոսի Կիրակոսյանի կողմից ներկայացված 18.03.2021թ. թիվ Կ-127 դիմումը, 26.05.2003թ. թիվ 1684611 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր գյուղի 06-051-0009-0025 ծակագրի անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, գ. Կաթնաղբյուր, 10-րդ փողոց, թիվ 7 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» մարտի 2021 թվականի N 64

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ 06-051-0031-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարո Մելքոնի Կարապետյանի կողմից ներկայացված 19.03.2021թ. թիվ Կ-126 դիմումը, 01.07.2002թ. թիվ 610306 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 238 -Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր գյուղի 06-051-0031-0001 ծակագրի անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, գ. Կաթնաղբյուր, 1 փողոց, թիվ 4 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ